ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Հնում Արարատյան դաշտում աճում էին այնպիսի խոտեր, որոնք ծնունդ էին տալիս մի տեսակ որդերի: Հայերը հավաքում էին այդ որդերը, եփում և ստանում մուգ ու պայծառ կարմիր գույնի ներկ, որը կոչվում էր որդան կարմիր կամ Հայկական ներկ:

Շատ դարեր այդ ներկը եղել է Հայաստանի հպարտությունը: Այն Մեսրոպի ճանապարհի ամենաթանկարժեք ու բարձրորակ ներկն էր և մեծ համբավ ուներ: Հաճախ հեռավոր երկրներում «Հայոց աշխարհի»-ի փոխարեն օգտագործել են Որդան կարմիրի երկիր արտահայտությունը: Որդան կարմիրի ստացումը և արտահանումը եղել է Հայոց թագավորների մենաշնորհը: Քաղաքամայր Արտաշատում կային հատուկ ներկատներ, որոնց կոչում էին «արքայական»: Հին Հայաստանից արտահանվող ապրանքների մեջ հասած ցուցակներում առաջին ապրանքը՝ որդան կարմիրն է: Արաբները Արտաշատ քաղաքը կոչել են Որդան կարմիրի քաղաք:

Բնական ներկանյութից բացի Որդան կարմիրը օգտագործել է նաև որպես թանաք մագաղաթները գրելու և նկարազարդելու համար: Հին և միջին դարերում Արևելքի և Եվրոպայի թագավորներն ու կաթողիկոսները ստորագրում էին միայն որդան կարմիր թանաքով:

Որդան կարմիրը Հին Հայերի միասնության խորհրդանիշն էր: Պատմական Հայաստանի բոլոր գավառների, իշխանական տների և բազմատեսակ այլ զինադրոշների վրա գերիշխում էր այս գույնը: Տիգրան II-ի թագավորության ժամանակաշրջանում հպատակություն ընդունած վասալ արքաները իրենց դրոշների վերին երիզը ներկում էին որդան կարմրով, որպես հավատարմության հավաստում Հայոց Արքայից-Արքային: Այն գերիշխող էր նաև հայաստանում և տարածաշրջանում ստեղծված գորգերում: 15-րդ դարի Հայ մեծ բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացին իր աշխատություններում ներկայացնում է դեղանյութեր, ստեղծված որդան կարմիրից: Այսօր էլ Երևանի Մաշտոցի անվ. Մատենադարանում կարելի է տեսնել այդ բաղադրատոմսերով ստեղծված բուժանյութերի նմուշներ:

Արմավիրի մարզի Մեծամոր լճի շրջակայքում և Արաքսի մերձափնյա անապատային տարածքներում, հատկապես Խոր Վիրապի վանքի մերձակա հատուկ պահպանվող տարածքում դեռևս հանդիպում էին որդան կարմիրի սեզերը: